

ՌՈՒՐԵՆ ՁԱՐԳԱՐՅԱՆԸ ԵՎ ԻՐ ՆՈՐԱՎՈՊԵՐԸ

Դ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Կարասկզրի արևմտահայ ռեալիստական արձակի նշանավոր դեմքերից է Ռուրեն Ձարգարյանը։ Ինչպես է, նա իր գրական ուղին սկսել է նախորդ տասնամյակում, րոյց ձևավորվել և առաջնակարգ գրողի անուն է վաստակել 1900-ական թթ., երբ մամուլի էջերում իրար հետևից լույս տեսան նրա նորավեպերը, հերթաթիւներն ու արձակ բանաստեղծությունները։

Իր լրագմերանգ ու ինքնատիպության դրոշմ կրող երկերով Ձարգարյանը շարունակել ու զարգացրել է նախորդ սերնդի՝ արևմտահայ ութսունականների գրական ավանդույթները և միաժամանակ նոր թափ հաղորդել ռեալիստական շարժմանը։ Դրան է ծառայել նա ոչ միայն գեղարվեստական ստեղծագործություններ, այլև դրական-քննադատական ելույթներով, հրապարակախոս-խորհրդարկ մարտական գրչով։

Ձարգարյանը հայտնի է նաև որպես տաղանդավոր թարգմանիչ, հմուտ մանկավարժ, դասագրքերի հեղինակ, որն իր գործունեության այդ կողմով ևս արժանացել է լայն ճանաչման և վայելի մեծ հեղինակություն։ Նրա մասին խոր հիացմունքով են արտահայտվել ժամանակակիցները։

Չնայած դրան, մինչև այսօր էլ չունենք Ձարգարյանի կյանքի ու ստեղծագործության ամբողջական ուսումնասիրությունը։ Նա մնացել է մեր համեմատարար քիչ յուսարանված հեղինակներից մեկը, որի նկատմամբ ժյատ է եղել հայ գրականագիտական միտքը թե՛ անցյալում, թե՛ հետագայում։ Նրա մասին արտահայտվել են տարրեր և հակասական կարծիքներ, որոնք հիմնավորված չլինելով՝ ասկեղծմանորոշել են ընթերցողին։ Ձարգարյանն արժանի է լուրջ ուշադրության և նրա ստեղծագործությունը՝ արդար ղեհատություն։

* * *

Ռուրեն Ձարգարյանը ծնվել է 1874 թ. Սևերեկ գավառական քաղաքում, ագրաարիկ ընտանիքում։ Նրա ծննդից երկու տարի անց ծնողները տեղափոխվել են Նախիջևան։

Իր նախնական կրթությունը Ձարգարյանն ստացել է տեղի Ազգային վարժարանում, իսկ հետո ուսումը շարունակել Թիկատինցու դեկավարած դպրոցում։ Հարկ է նշել, որ անվանի գրողը րարերար ազդեցություն է ունեցել իր սանի մտավոր աճման ու լարոյական դաստիարակության վրա։ Ընդհատված դպրոցյան գրեթե լրացուցական նախասիրած առարկան եղած է հայերեն աշխարհարարը, — հետագայում գրել է Ձարգարյանը։ — Շարադրության դասերը, այն մեթոդով՝ որ ինք կիրառած է, գեղեցկագիտական այն ինքնահատուկ թեւադրություններով՝ որոնց կրցած է գմայլելի ճարտարությամբ մը թափանցել տալ իրեն աշակերտող հոգիներուն մեջ, հասցուցած են գեղասեր ու գրական ձգտումներով, գրական ճաշակով կազմված մեկ քանի սերունդներ»։

1892 թ. ավարտելով ուսումը, Ձարգարյանը նվիրվում է հայ մտավորականին մատչելի միակ գործին՝ մանկավարժության։ Երկար տարիներ որպես ուսուցիչ նա պաշտոնավարել է Նախիջևանի ոչ հեռու գտնվող Մեզիրե քաղաքի Ազգային կենտրոնական վարժարանում, դասավանդելով հայերեն և ֆրանսերեն լեզուներ, հայ գրականություն և հայոց պատմություն։ Իր մանկավարժական գործունեությամբ նա կարևոր դեր է խաղացել մատաղ սերնդի կրթության

ու դաստիարակության գործում՝ նվաճելով հարգանք ու հեղինակություն։ Նրան շատ էին սիրում ու գնահատում աշակերտները, որոնցից մեկի վկայությամբ «...ան դպրոցի աշակերտներուն ամենասիրելին դարձավ»²։

Մանկահասակ սաների վրա ուժեղ տպավորություն է թողել ուսուցչի արտաքինը. «Պարթևահասակ, երկու ծայրերը ոլորած պեխով, գանգուր, սև մազերով և կրակի նման վառող աչքերով երիտասարդ»³, — այսպես է հիշում Զարդարյանին աշակերտներից մեկ ուրիշը, որի հավաստմամբ նրա շուրջն էր համախմբվում նոր սերունդը և դաստիարակվում նրա խոսքի անմիջական ազդեցությամբ։

Լինելով ազատամիտ ու հայրենասեր ուսուցիչ՝ Զարդարյանը իշխանություններից գաղտնի դասավանդում էր հայոց պատմություն. «...Ամեն պատմության դաս սև գրատախտակին վրա կը գրեր, և մենք մասնավոր տևտրակներուն մեջ կ'ընդօրինակեինք ու գաղտնի կը պահեինք»⁴, — պատմում է նախկին աշակերտներից մեկը և ավելացնում, որ ուսուցիչը շարունակ հիշեցնում էր գաղտնապահության մասին։ Նա նկատի ուներ թուրքական բռնապետության հայահալած քաղաքականությունը, ուստի և զգուշացնում էր իր սաներին լինել զգաստ ու գաղտնապահ։

Զարդարյանն ուսուցիչ էր ոչ թե զբաղմունքով, այլ կոշտով, իբրև ինքնապատկերացում։ Նրա խոսքը տպավորիչ էր, պատմելու եղանակը՝ գրավիչ։ Դրա համար էլ նրան լսում էին հմայված. «...պատմած ժամանակ բոլորս ալ ականջ կը տրած՝ անոր շրթունքներեն կախված կը մնայինք և մենք մեզ մոռցած, կարծես երազային աշխարհ մը կը փոխադրվեինք», — ասում է նույն աշակերտը։ Ուսուցչի «ազգաշունչ պատմությունները» արձագանք էին գտնում սլատանեկան հոգիներում և նրանց մեջ արթնացնում ազգային ինքնաճանաչության գիտակցություն. «Եվ երբ ան իր ցանած սերմերուն արգասավորիլը կը տեսներ, մանուկի մը պես կուրախանար»⁵։

Որպես մայրենի լեզվի ուսուցիչ Զարդարյանը առանձնապես մտահոգված էր իր սաների լեզվական ընդունակությունների զարգացմամբ։ Այդ է պատճառը, որ նա շաբաթը մեկ անգամ անց էր կացնում շաբաթը մեկ անգամ «Երազարդության ատեն վայն էր եկեր այն աշակերտին, որ մասնավոր ջանք էր անում մենք-մենք բառերով արտահայտվելու»⁶։ Զարդարյանը տանն էլ կարող «փութուրուցիկ բառեր» գործածողներին և սովորեցնում էր գրել ծնողներին ու պապերին «պարզ ու անուշիկ լեզվով»։

Դժբախտաբար երկար չտևեց Զարդարյանի ուսուցչությունը Մեղրեի վարժարանում։ 1903 թ. շատ մտավորականների (Բլկատինցի և ուրիշ ուսուցիչներ) հետ ձերբակալվեց նաև Զարդարյանը և մոտ մեկ տարի բանտում տառապելուց հետո ազատ արձակվեց։ Այդ օրերի ապրումներն ու մտորումները հետագայում նա արտահայտել է «Առյուծի ժանիքեն» հուշագրության մեջ. որն առաջին անգամ լույս է տեսել առանձին գրքով 1906 թ. «Հայ արսորական» ծածկանունով, Ֆիլիսոփ (Պլովդիվ) քաղաքում։

1904 թ. Զարդարյանն անցնում է Զմյուռնիա, ուր հրավիրել էին ստանձնելու Ազգային վարժարանի անօրինությունը։ Բայց զա տեղի չի ունենում տեղական իշխանությունների հարուցած արգելքների պատճառով։ Նրան թույլատրվում է մեկնել Մանիսա, որտեղ որոշ ժամանակ վարում է տեղի վարժարանի տեսչությունը։ Բայց այստեղ էլ նրան հանգիստ չեն տալիս և նրա դեմ սկսված հալածանքը գնալով սաստկանում է։

Խուսափելով հետապնդումներից, Զարդարյանը ստիպված 1905 թ. ընտանիքով փախչում է Բուլղարիա և հաստատվում Պլովդիվ քաղաքում, ուր և սկսում է խմբագրել «Ռազմիկ» եռօրյա թերթը (1905—1908)։ Վերջինիս խմբ-

2 «Հայրենիք» ամսագիր, 1959, №4, էջ 89։

3 Նույն տեղում, 1958, №8, էջ 55։

4 Նույն տեղում, 1959, №4, էջ 89։

5 Նույն տեղում, էջ 90։

6 Նույն տեղում։

բազմազանները մինչև 150-րդ հասարակարգը կրում են նրա ստորագրությունը, իսկ դրանից հետո թեև չեն ստորագրված, բայց մեծ մասամբ դարձյալ պատկանում են խմբագրի գրչին։ Այդ հոգվածները շոշափում են լեզվի, կրթության, դաստիարակության, սոցիալ-տնտեսական և ազգային կյանքին վերաբերող հարցեր, որոնց առաջադրման ու լուսաբանման մեջ դրսևորվել է հեղինակի դեմոկրատական դիրքորոշումը։

Ոսմանյան սահմանադրության հռչակումից հետո (1908 թ.) Զարգարյանը սփռված է Կ. Պոլիս և, ժամանակակցի վկայությամբ, դառնում օրվա կենտրոնական դեմքը դրական միջավայրում։ Այնքան մեծ էր նրա հեղինակությունը, որ Քասիմը (Միսաք Գոշունյան) անմիջապես հրավիրում է նրան աշխատակցելու «Ժամանակ» օրաթերթին. «Ատով կուզեր իր թերթը սիրցնել մտավորականությանը»⁷, — գրել է Սիրունին։ Եվ իսկապես, սկսած 1908 թ. դեկտեմբերից Զարգարյանն աշխատակցում է «Ժամանակին», հրապարակելով օրվա հրատապ հարցեր արժարժող հոգվածներ, որոնք իբրև կանոն լույս էին տեսնում խմբագրական սյունակներում։

Զարգարյանի հրապարակախոսությունը նոր թափ ստացավ 1909 թ. հունիսից, երբ նա դարձավ «Ազատամարտ» օրաթերթի խմբագիր։ Իր շուրջը համախմբելով ժամանակի կարող ուժերին՝ նա կարողացավ թերթը դարձնել ոչ թե նեղ, կուսակցական օրգան, այլ «հայ ժողովրդի առողջ բնազդներուն ամբողջական արտահայտություն, հայ մտքին ճիշդագույն ասպարեզ»⁸։ Միայն դրանով կարելի է բացատրել, թե ինչու այդ թերթին և նրա գրական հավելվածին աշխատակցում էին տարբեր հայացքի տեր գրական-հասարակական գործիչներ։ Նրանց բոլորին միացնում էր հայ ժողովրդի ազատագրական պայքարի գաղափարը, որով այնքան ոգեշնչված էր Զարգարյանը։

Գրական-հրապարակախոսական գործունեությանը զուգընթաց Զարգարյանը Պոլսում վերսկսում է մանկավարժական աշխատանքը և Կեդրոնական վարժարանում դասավանդում հայոց լեզու և գրականություն։ Հենց այդ ժամանակ է, որ նա ցածր, միջին և բարձր դասարանների համար կազմում և հրատարակում է «Մեղրագետ» խորագրով լեզվի և գրականության դասագրքեր (թվով 6)։

Համազգային ողբերգության օրերին (1915 թ. ապրիլ) արևմտահայ շատ մտավորականների հետ ձերբակալվում է նաև Ռուբեն Զարգարյանը և քսոթվում Այաշի «Քանի մը օրե ի վեր կը գտնվիմ Անքարայի վիլայեթին Այաշ քաղաքը, — գրել է նա 1915 թ. ապրիլի 28-ի թվակիր բացիկում՝ ուղղված կնոջը, — ողջ առողջ եմ առաջմ. միայն ձեզ կը մտածիմ. կը հուսամ որ դուք այ ողջ առողջ եք. զավակներուս Խաֆայեթին, Հրաչին, Ազատին և Մովսես-րին աչրերեն կը համբուրեմ. թուրքերենով գրված քարտով մը տեղեկություն տվեր ձեր առողջության մասին. բարենևր...»⁹։

Ի դեպ, բնորոշ է, որ սույն բացիկը գրված է սև մատիտով և թուրքերեն. — հանդամանք, որ ականեր է դարձնում քսոթականի վիճակը։

Ինչուս զնացող և ստացվող դրությունները պարտադիր կարգով ստուգվում էին, ուստի և Զարգարյանը հանձնարարում էր կնոջը՝ գրել նույնպես թուրքերեն։

Ոչ պակաս հետաքրքրական է Զարգարյանի երկրորդ բացիկը՝ գրված արդեն հայերեն, 1915 թ. մայիսի 28-ին, Ենիկյուրիից. «Սիրելի վերոնկա։ Այսօր կը մեկնինք վեց ընկերներով դեպի Նրկի Շեհիր, առանց գիտնալու թե անկե ո՞ւր պիտի տաքվինք. հետևաբար սպասեցեք որ վերջնականապես տեղս ու վիճակս որոշելե ետք կարողանամ ձեզի նոր հասցես ցույց տալ։ Առողջությունս լավ է. հույս ունիմ թե բու և զավակներուս առողջությունն ալ տեղն է։ Կը բարենեմ ամենքդ»¹⁰։

⁷ Նույն տեղում, 1925, №3, էջ 30։

⁸ Նույն տեղում, էջ 28։

⁹ Գ. Գ ո Ր Գ Յ Ա Ն. Ամենուն տարեգիրք. Պեյրութ, 1959, էջ 153։

¹⁰ Նույն տեղում, էջ 155։

Հավատարիմ ամուսնու և հոգատար հոր սրտից պոկված խոսքեր են սրանք, որոնցում ականարկված է միաժամանակ նրա տագնապն անորոշ գալիքի հանդեպ: Հիրավի, այս տողերը գրելուց քիչ անց Ջարդարյանն իր վեց ընկերներով տարագրվում է Մեսքենե. այնտեղից էլ Եփրատի մյուս ափը, ուր և սպանվում է թուրք ջարդարարների ձեռքով:

Տակավին տասնյոթամյա պատանի էր Ջարդարյանը, երբ իր ուսուցիչ Թվկատինցու քաջալերանքով սկսեց զբաղվել գրական-ստեղծագործական աշխատանքով և բնավ զարմանալի չէ, որ նրա առաջին տպագիր գործը «Իմ բաղձանքը» վերնագրով երախտագիտական խոսք է՝ ուղղված Հովհաննես Հարությունյանին (Թվկատինցի)։ «Բարեկամ, կը հիշեմ դեռ երբեմն մեր սրտերուն մեջ թողած քաղցրիկ և հեշտարար հուշերդ, անմոռանալի են նոքա հավետ»,—այսպես է սկսվում Ջարդարյանի գրչի առաջին արգասիքը, որը տոգորված է ջերմ սիրով դեպի իր ուսուցիչն ու նրա գործը: Աշակերտն այնուհետև հիշում է, թե ինչպիսի հափշտակվածություն էին լսում ուսուցչի հուզիչ պատումները, տարվում նրա խոսք ու գրույցով: Նա շեշտում է ուսուցչի դառն ու դաժան կյանքը, որի պատճառով Թվկատինցին չկարողացավ իրականացնել իր շատ մտահղացումներ: Սակայն որքան էլ դժվարին է եղել ուսուցչի կյանքը,—ասում է Ջարդարյանը,—որքան էլ ծանր նրա կորուստները, միևնույն է, նա իրավունք չունի դադար տալու իր գրչին, ընդհատելու ստեղծագործական աշխատանքը. «...Դուք, որ ընկերական կյանքը այնչափ ուսումնասիրած եք,—դրել է Ջարդարյանը,—առավելապես այս գավառին (խոսքը Խարբերդի մասին է— Գ. Ս.) կյանքը, դուք որ նորա այնչափ մոտիկ կ'ապրիք և ամեն թյուր կողմերը սերտած եք, ինչո՞ւ չը գրեք, և լռելն հանցանք մը չէ՞՞ հանձարին ու տաղանդին համար»¹¹:

Համոզված, որ «գրագետի մը մեկ շունչը հարյուր տեր պապայի քարոզեն» ավելի է, Ջարդարյանը հորդորում է Թվկատինցուն ստեղծագործել և այդ կերպ հաղթահարել անձնական վիշաքը: Ավելին, նա առաջադրում է նաև նյութ. «...պանդուխտին մորն ու սիրելվույն մինչև յամերիկա ղրկած հոգեբուխ հառաչները նկարեցեք, ուրախության բողին տակ ծածկված տխուր դեմքերն երևվան հանեցեք, սիրելվույն կողմե դրկված թղթիկ մ'ալ հիշեցեք, և նյութ չե՞ն միթե սոքա»: Նկատի ունենալով Թվկատինցու կորուստները (կնոջ և որդու), նա ոգի է ներշնչում ուսուցչին, ստեղծագործական մղում տալիս և իր խոսքն ավարտում՝ ասելով. «...սրբե արցունքդ և ողջերուն հետ ապրե»¹²:

Ոգեշնչված առաջին գործի տպագրությամբ՝ Ջարդարյանն այնուհետև աշխատակցում է «Մասիս», «Բյուրակն», «Արևելյան մամուլ», «Արևելք», «Շիրակ», «Բանբեր գրականության և արվեստի», «Ժամանակ», ինչպես և իր խմբագրած պարբերականներին: Դրանց էջերում նա հրապարակում է գեղարվեստական (ինքնուրույն ու թարգմանական) երկեր և գրական-հրապարակախոսական հոդվածներ:

Իննելով վերին աստիճանի խստապահանջ հեղինակ, Ջարդարյանը իր կենդանության օրով հրատարակել է միայն «Ցայգալույս» խորագրով մոզովածուն (1910), որն ամփոփում է նրա քսանամյա գրական գործունեության ընթացքում ստեղծած գրեթե բոլոր գեղարվեստական երկերը: Ժողովածուն ջերմ ընդունելություն գտավ դրական շրջաններում և արժանացավ բարձր գնահատականի: Նրա մասին եղան մի շարք գրախոսականներ, որոնց հեղինակները միահամուռ կերպով նշում էին Ջարդարյանի ստեղծագործական ինքնատիպությունը և այն թարմ շունչը, որ նա բերում էր մեր գրականության մեջ որպես բնաշխարհի ծնունդ: Տպավորությունն այնքան մեծ էր, որ շատ շուտով նրա գործերից մի քանիսը թարգմանվեցին օտար լեզուներով (ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն, ռումիներեն, թուրքերեն): «Ցայգալույսը» թարգմանվեց ֆրանսերեն և 1912 թ. հրատարակվեց Փարիզում: Սա, իհարկե, հազվագյուտ երևույթ էր մեր արձակագրության մեջ, երբ իր առաջին գրքով Լեփաուսարդ հեղինակն այդպիսի լայն ճանաչման է արժանանում:

¹¹ «Մաղիկ», մարտի 2 1891, էջ 7:

¹² Նույն տեղում

Ո՞րն է դրա պատճառը, ինչո՞ւ Բացատրել Զարդարյանի ստեղծագործական հաջողությունը:

Դա բացատրվում է ամենից առաջ նրանով, որ հեղինակը, գալով գավառից, իր հետ բերում էր ժողովրդական կյանքի ու բանահյուսության հարազատ դույններ ու թարմ հնչյուններ: Նրա գեղարվեստական խոսքը հագեցված էր կենսական տպավորություններով և արտահայտում էր խավարի ու գրկանքի մեջ տառապող հասարակ մարդկանց ոգու ձայնը: Իրականության խոր զգացողությունը հնարավորություն էր ընձեռել գրողին՝ տալու այնպիսի կերպարներ ու պատկերներ, որոնք փայլում են ճշմարտացիությամբ և ունեն գեղարվեստական ներգործության մեծ ուժ: Դրան պետք է ավելացնել Զարդարյանի բնարած ժանրի՝ նորավիպի կամ արձակ բանաստեղծության հանդեպ եղած բոլոր հետաքրքրությունը: Ընթերցողը ներքուստ կարիք էր զգում այնպիսի կերպերի, որոնք սեղմ ծավալի մեջ, հակիրճորեն վերարտադրում են կյանքի մի կտոր և դրանով իսկ պատկերացում տալիս ամբողջի մասին: Հենց այդպիսի հատկություն ունի նորավիպը, որի մասին խոսելով՝ Զարդարյանը գրել է. «Նորավիպը պարզապես խտացած վեպ մըն է, ուր ավելի սեղմ շրջանակի և անձուկ սահմանի մը մեջ վեր առնված է կյանքի մեկ կողմը կամ բարձրություն մեկ նկարը, համառոտելով ամբողջություն մը մանրանկարչական դժերով»¹³:

Նորավիպի այս ընդունումը բխում է հեղինակի ստեղծագործական փորձից և միանշանակաբար համապատասխանում է նրա երկերի ժանրային յուրահատկությանը: Զարդարյանի ուժը ոչ թե նյութի ծավալման, այլ խտացման, սեղմ ու հավաք հյուսվածքի մեջ է: Դրա շնորհիվ էլ նրա գործերը ջերմ արձագանք գտան ընթերցողների շրջանում և արժանացան բարձր գնահատականի:

Նվաղ կարեոր չէ նաև այն հանգամանքը, որ Զարդարյանն իր երկերում արժարժում էր արդիական նշանակություն ունեցող հարցեր: Դրանց բնույթը պարզելու և ժամանակը հասկանալու տեսակետից էական նշանակություն ունի հենց ժողովածուի խորագիրը՝ «Ցայգալույս»:¹⁴ Թե ի՞նչ իմաստ ու բովանդակություն է դրել նա այդ վերնագրի տակ, երևում է ժողովածուին կցված առաջաբանից. «Ցայգալույս»,— գրել է Զարդարյանը,— խորհրդանշանն է պատմական այն շրջանին, ուր բռնադատիչ խավարը կը ճնշեր թրքահայ մտքին ու դրականության վրա: Բանը ոչնչացած չէր, բայց կենսագուրկ ու կիսակենդան, հաղիվ կը ճառագայթեր մթնոստվեր ու մոռյալ հորիզոնի մը վրա, որպես տրտմության անդրադարձ ցուրբ դայգալուսային աշխարհի մը մեջ»¹⁴:

Լավ է ասված. «բռնադատիչ խավար» և «մրասովեռ ու մոռյալ հորիզոն»,— ահա Զարդարյանի պատկերած իրականությունը, որի վրա դժվար չէ նկատել «տրտմության անդրադարձ ցուրբ»: Ընդգծված լատերով հեղինակը բնութագրել է իր հերոսների ժամանակն ու միջավայրը, նրանց սոցիալական ու քաղաքական ծանր կացությունը թուրքական բռնակալության դաժան լծի տակ: Ահա այդ պատմաշրջանի գեղարվեստական տարեգիրն է Զարդարյանը, որի պատկերած կյանքը որքան էլ տխուր է, այնուամենայնիվ ընթերցողին չի վարակում հոռետեսությամբ, այլ զգացնել է տալիս ինչ-որ լուսիս շող «ցայգալուսային աշխարհի մեջ»: Հենց այդ աշխարհի կրկին է Զարդարյանը, որը գնում էր դեպի լույս և կարոտով սպասում այգաբացին:

Զարդարյանի նորավիպերը, հեքիաթներն ու արձակ բանաստեղծությունները կարդալիս դժվար չէ զգալ հեղինակի լավատեսական հայացքը կյանքի և ժողովրդի նկատմամբ: Նա համոզված է, որ շարն անցողիկ է և բարին ու ազնիվը՝ մնալուն, հետևաբար բռնակալները կանցնեն, իսկ իր հողին կապված ժողովուրդը կմնա հավիտյան:

Այստեղից էլ հայրենի հողի ու ժողովրդի միասնության գաղափարը, որ տարրեր կրանգնեցնում էր հնչում է Զարդարյանի ստեղծագործության մեջ: Այդ

¹³ Ի. Զ ա ռ դ ար յ ան. Ցայգալույս. Երևան, 1959, էջ 500:

¹⁴ Ի. Զ ա ռ դ ար յ ան. Ցայգալույս. Կ. Պոլիս, 1910, էջ 5:

առումով հետաքրքրական են նրա նորավեպերը, որոնք թեև քանակով մեծ չեն, բայց աչքի են ընկնում ձևի թարմությամբ ու բովանդակության հարստությամբ:

* * *

Զարդարյանի ստեղծագործության առաջատար թեման գալառական կյանքն է, կարիքի ու հետամնացության մեջ խարխափող արևմտահայ գյուղն ու գյուղացին: Ճիշտ է, այդ թեման առավել կամ նվազ հաջողությամբ շոշափել են նաև նրա նախորդները (Թլկատինցի, Գեղամ Տեր-Կարապետյան և այլք), բայց Զարդարյանը նրանցից առաջ անցավ իր երկերի գաղափարական-գեղարվեստական մակարդակով: Նա շատմանափակվեց միայն գյուղական միջավայրով, այլ խորացրեց ու ընդլայնեց կյանքի պատկերման շրջանակները և, որ կարևորն է, ստեղծեց մի շարք ռեալիստական կերպարներ, որոնք ունեն ճանաչողական ու գեղարվեստական մեծ արժեք:

Զարդարյանը ճշմարիտ արվեստագետի գրչով պատկերեց բռնակալության ու հարստահարիչների լծի տակ տառապող արևմտահայ աշխատավորության ծանր վիճակը, դրամի ավերիչ ազդեցությունը մարդկանց բնավորության ու հոգեբանության վրա: Նա ցույց տվեց, թե ինչպես խարխվում են նահապետական կյանքի հիմքերը, նոր թափ է ստանում պանդխտության հոսանքը, քայքայվում է ընտանիքը, խախտվում են հնավանդ սովորությունները և կյանքը խճողվում է հակասությունների մեջ: Տգիտություն, սնոտիապաշտություն, հարստահարություն, բարոյական անկում,—ահա Զարդարյանի նկարագրած գյուղի պատկերը: Հավատարիմ մնալով կենսական ճշմարտությանը՝ նա քաշում է «վարագույրը» և մեր առջև բացվում է գավառական միջավայրն իր ողբերգական անցքերով:

Ահա, օրինակ, «Պուտ մը ջուր» (1902) գրվածքը, որը լինելով մի մանկան պատմություն՝ բացահայտում է այդ իրականությանը բնորոշ սնոտիապաշտության ծանր հետևանքը: Տատը որոշել է մի ամբողջ շաբաթ անոթի մնալ և անոթի պահել իր թոռնիկին, որպեսզի սուրբ Սարգիսը բարի աչքով նայի նրա վրա: Նախավերջին օրը վեց-յոթ տարեկան մանկիկը այլևս չի կարողանում դիմանալ և ջուր է խնդրում: Անհանգիստ է երեխան, նույնիսկ կորցրել է քունը, որովհետև, ինչպես հեղինակն է ասում, «...սիրտը կայրեր, բերանը կչորանար»: Ծվ չնայած մանկան պաղատանքին, սնահավատ տատը մերժում է սիրած թոռնիկի խնդրանքը: Նրան քնեցնելու համար նա սկսում է օրոր ասել, որ ժամանակին երգել էր փոքրիկի հոր օրորոցի վրա: Տատը շաբոնակում է նույն հանգով երգել, արդեն բացվում է լույսը, բայց ավագ թոռնիկը չի արթնանում: Նրա ուղածը պուտ մը ջուր էր,—ասում է հեղինակը.— ու մեծ մայրն այնքան քարսիրտ էր եղեր այդ գիշեր», որ անխախտ է պահում ծոմապահությունը և դրանով իսկ պատճառ դառնում թոռնիկի կործանման:

Արտաքուստ անմեղ թվացող երևույթի գեղարվեստական իմաստավորմամբ հեղինակը հանգել է խոր ընգհանրացման: Մայրակորույս մանուկը գոհ է դառնում սնահավատության, որովհետև հետամնացության սրստճառով մարդիկ չեն հասկանում իրենց արածը:

Ոչ պակաս ուշագրավ է «Սարերու տղան» (1902), որի սյուժետային զարգացումն ընթանում է բոլորովին նոր հանգամանքներում: Նորավեպն սկսվում է բնության նկարագեղ պատկերով, որի ֆոնի վրա գծագրվում է գլխավոր հերոսի՝ Սեդույի դիմաստվերը: Ո՞վ է նա, ինչո՞ւ է մենակ անտառի մեջ,— ահա այն հարցերը, որոնց պատասխանը կազմում է գրվածքի բովանդակությունը:

Սեդուն գյուղական միջավայրի ծնունդ է, մի քաջ երիտասարդ, որը տարված է «որսի ու որսորդության հոգսերով» և ամբողջ ժամանակն անց է կացնում բնության մեջ, սարերում ու անառններում: Նա այնպես է ձուլված ընտանությանը, որ դարձել է նրա անբաժան մասը: Բնության խոր զգացողությամբ թոթված հեղինակը զարմանալի նրբանկատությամբ է ցուցադրում ընտանյան

դեղնակույթները, որին սիրտն արված է իր ներսը: Հրացանն ուսին քայլում է «սարերու աղան», նայաքրը հառած հեռավոր լեռնագագաթներին: Նա անհաղորեն ձգտում է միշտ գեպի վեր, դեպի «անկոխ բարձրություններ»: Եւ չի սիրում «ներքի դաշտին տափարակ ու ընգզեցուցիչ տարածությունը»: Եվ դա այն պատճառով, որ Սևդոյի կարծիքով բարձունքից ավելի տեսանելի են ոչ միայն վարի հովիտներուն փոքրությունն ու արգահատելի ոչնչությունը, այլև այնտեղ ապրող մարդկանց պատկերությունն ու ողորմելիությունը, կյանքի դժոխք ու ճգնաժամ ընդթափող: Եվ դա ներքինակր ցույց է տալիս նորավեպի հետագա շարադրանքում, երբ Սևդոն, վերջապես, գիշերն իջնում է գյուղ: Դեռ յոթն չհասած, նա լսում է մոր հառաչանքն ու ողբը՝ Պարգում է, որ քույրը՝ Աշխենը, «համայնքի մեջ անուշ ու անհաս աստղիկ մը», փախել է մի լեռնական հետ, որին «սեր տված էր իր ծնողքեն գաղտնի»: Դա որքան ծանր նշանակություն ունի, նույնքան էլ անպատվարներ էր եղբոր համար: Աշխենն իր արարքով արատավորել էր հայրական տան պատիվը և ցեխ շարտել նորստեղծ եղբոր անվան վրա: Դրա համար էլ Սևդոն վրեժխնդիր է լինում և դաժանորեն պատժում բոլորը:

Այսպիսով, Սևդոյի հերոսական նկարագիրը ստանում է ողբերգական շեշտ, որը եւ արտահայտում է նկարագրվող կյանքի հուսահատական շունչը: Հանդիման է մի ամբողջ օջախ, որի կործանումը հեղինակը ժողովրդական մտայնությամբ վերագրում է նախախնամությունը. «Դժբախտ ընտանիքին դուրս դուրսված մնաց սուկե կարը, որովհետև սև հավը անեծքներով ամենեն զոխալինովը վայելց ալդ աանը վրա»:

Որ խնայական ակնդիմանցող աղետներն ու ցավալի դեպքերը ժողովուրդը հաճախ ընկալում է որպես նախախնամության արդյունք, մի անգամ եւ շեշտված է «Սև հավը կանչեց» (1903) վիպակում: Դարձյալ քայքայում մի օջախի, որի դժբախտությունը նույնպես հիմնավորվում է ժողովրդական մտայնությունով: «Սև հավն էր կանչել այդ ընտանիքին վրա», — այս խոսքերով է ավարտվում վիպակը: Բայց տվյալ դեպքում դա չէ նշանակում, այլ այն անողորմ ռեալիզմը, որով հեղինակը մերկացրել է գյուղական մռայլ իրականությունը, ցուցադրել այնտեղ կատարվող հակամարդկային արարքները:

Լավատեսական լինելով այդ կյանքին ու մարդկանց՝ Զարգարյանը կարողացել է ստեղծել մի շարք կերպարներ, որոնք իրենց բնորոշումներով ու գործողությամբ միանգամայն տիպական են տվյալ միջավայրի համար:

Դա վերաբերում է նաև «Տան սերը» (1904) պատմվածքին, ուր անսքող դրսևորված են գյուղացու սեփականատիրական հոգևորանությունը, հինի կառած մնալու սովորությունը, Հեղինակը հանգիստ պատմում է Առաքելի և նրա ընտանիքի ախուր կյանքի ու վախճանի մասին, որը ցուցադրում է գավառական իրականության գույք ու լճացած վիճակը:

Ինքնաճի կենտրոնական դեմքը ծեր Առաքելն է, որին «բաղբջի անծանոթ մեկը» սրտմտորեն անվանել է կով, նրա «անկենդան ու միամիտ նայվածք» պատճառով: Նու բարձր է տալիս ողորմելի գոյություն, որը «տարվան քույր ընթացքին մեջ» ոչ որի աչքին «չպիտի դարձնել», և թե ձմեռվա ցյուրտ ու ձյունային օրերը չլրացին»: Այդ օրերին է, որ նա ձեռք է առնում կոտորած կոթով թին և դարմանալի համառությամբ մարքում բակում «բլրացած ձյունը», ինչպես եւ տան պատերի շուրջը կոտակված ձյան դեղերը: Հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես առաջացած տարիքի մեջ անգամ այդ ծերունին անվճատ հոգով շարունակում է աշխատել, հարդարելով փողոցը, շտկելով դարուփոսերը: Եվ ինքը ներքուստ ուրախ է ու հպարտ իր կատարած «արի փորձի համար»:

Զարգարյանը այնուհետև նկարագրում է այն ցուրտ ու մութ տունը, ուր ապրում են Առաքելն ու նրա կինը՝ Մարիամը: Վերջինս շատ քիչ է լինում տանը, բանի որ աշխատում է ունեւորների մոտ որպես լվացարար և ամեն դժոխքի ընդունակ անձնավորություն: Առաքելն է, որ «մինչև իրիկուն չորս պատկերում պահպանությունը կրներ»: Նա ասես հսկում է աշխարհից դառված «ուրվարակ, լուին ու կիսավեր» այդ տունը, նրա հետ կապելով իր ճակատագիրը: Նույնիսկ կնոջ մահից հետո, երբ մնացել է անտեր ու անտիրական,

նա չի ուզում բաժանվել պապենական օջախից: Ավելին. հարկադրաբար տեղափոխվելով ազգականի մոտ, Առաքելը դարձյալ սիրտը չի կտրում հին ու անշուք տնից. «Խեղճն ու միտքը այդ տան վրա է»,—ասում է հեղինակը: Ի՞նչ է սա, սովորության ուժ, թե սեփականատիրական բնազդ: Թերևս և՛ մեկը, և՛ մյուսը, որ զրկել է հերոսին հոգեբարոյական բարձր ձգտումներից և դարձրել նյութին գերի: Առաքելը և նրա «մութ ու խոնավ ներքնատունը» մարմնավորում են գավառական կյանքի խեղճությունը և աղճատված հոգեբանությունը:

Զարդարյանի կերտած կերպարները թեև նույն միջավայրի ծնունդ են, բայց ընդհանրություններով հանդերձ միմյանցից տարբեր են ու հետաքրքիր: Դա վերաբերում է հատկապես նրա ստեղծած կանանց պատկերասրահին, որտեղ յուրաքանչյուրն ունի իր կոնկրետ նկարագիրը, իր ուրույն ճակատագիրը: Զարդարյանը ցասկոտ գրչով բացահայտել է շրջապատող կյանքի այլանդակությունները ամուսնաբնական ոլորտում: Նա ցույց է տվել, որ տիրող իրականությունը կնոջը դատապարտել է ստրկության, զրկել նրան սիրելու և ընտրելու իրավունքից: Այդ պատճառով էլ կինը կաշկանդված է նյութական ու բարոյական կապանքներով և տառապում է իրարամբժ զգացումների հանգույցում, դառնալով ժամանակի բարքերի զոհ:

Այդ տեսակետից հետաքրքրական է «Տերտերին հարսը» (1905) պատմրվածքը, որը հեղինակն անվանել է «գավառական կյանքի պատկեր»: Այստեղ Զարդարյանը բնորոշ երանգներով ներկայացրել է գավառական կյանքի տխուր ու հոգեմաշ մթնոլորտը, ուր պատկերված է տեր Կարապետի հարսը՝ Հոռմերը, որի մասին հեղինակն ասում է. «...Ի՞նչ կնիկ, ի՞նչ կնիկ Հոռմերը. խաթուն մինչև մազերուն վերջին թնճուկը, ցածգլուխ, համբերող, իր ձայնիկը մարդ չլսեց...»:

Բայց այդ համեստ ու խաթուն կինը դժբախտ է անձնական կյանքում: Տակավի՛ն երիտասարդ՝ նա կորցրել է ամուսնուն և մնացել իր մանկահասակ զավակի հետ՝ «ավերակ օճախին մեջ»: Այնուհետև փակում է դռնակը և առանձնանում իր ցավի հետ, որովհետև շուտով ծանոթ դեմքերի հայացքում տեսնում է «մեծ փոփոխություն». նա այլևս չի զգում առաջվա «պատկառանքը, ակնածանքն ու հարգանքը», ամենքը երես են դարձնում և ոչ ոք չի լինում «իր ցավին ցավակից»: Ուստի այդ գեղեցիկ, փարթամ կնոջից «տըժգույն ստվեր կը մնար, որ երթալով կհալեր»,—ասում է հեղինակը: Եվ դա այն պատճառով, որ «քանի մը քոսոտ հոգիներ, քանի մը հոտած բերաններ իրենց ագին ու լեզուն» այդ կնոջ տան «դռան քարերուն կքսեին ու գայն պղծելու կհետամտին»: Եվ որովհետև դրա դեմ ոչինչ չէր կարող անել որբեայրի մի կին, ուստի թելադրված զանազան նկատառումներով (պաշտպանել իր պատիվը, զավակի համար քիչ թե շատ ապահով կյանք ստեղծել և այլն), ամուսնանում է մոտիկ գյուղերից մեկի տանուտեր Թորոսի հետ: Բայց շատ չանցած, տանուտերի կարգված տղաները, որ հաճությամբ չէին ընդունել իրենց հոր ամուսնությունը, այնպիսի ատելացայտ վերաբերմունք են դրսևորում Հոռմերի և նրա զավակի նկատմամբ, որ ամբողջովին դառնացնում է նրանց կյանքը:

Տպավորիչ է պատմվածքի վերջնամասը, որն ունի դարձյալ ողբերգական շեշտ: Սոր տարվա առաջին գիշերը, որ այնքան ցուրտ ու սառնաշունչ էր, Հոռմերը «հեծկլտանքով ու արցունքով խեղդված» բռնում է իր ոտարորիկ զավակի ձեռքը և դուրս գալով տանուտերի դժոխային տնից՝ ճանապարհ ընկնում դեպի իրենց գյուղը, որը «...շատ հեռու էր այս ուշ ատենը, ու հետո ո՛ր ծառին տակ շքավորվելու կերթային...»,—եզրափակում է Զարդարյանը:

Ակներև է, որ Հոռմերի կերպարով հեղինակը բացահայտել է առաքինի հայ կնոջ բարոյական վեհությունը, որը թույլ չի տալիս նրան նվաստանալ և ստրկանալ հանուն մի կտոր հացի. «Ձեր հացը ձեզի ըլլա,—դառնորեն ասում է Հոռմերը տանուտերին ու նրա տղաներին,—մարդ մ'անոթի չի մեռեր, ալ հերիք եղավ քաշանքս, ալ չեմ դիմանար՝ երբ զավակս շան ձագի մը գինն անգամ շունի ձեռքի աչքին...»:

Լրաստանի տեղափոխվելուց հետո Զարգարյանը իր երկերում արտացոլեց արևմտահայության ծանր ու ողբերգական կացությունը թուրքական լռնապետության յժի տակ՝ Կ. Պոլսից հեռանալուց հետո միայն նա հնարավորություն ունեցավ ազատորեն անդրադառնալու հարազատ ժողովրդի ազգային տասապանքին, նրան հուզող խնդիրներին, որոնց գեղարվեստական արժարժամբ ձգտում է գաղափարապես գինել իր հայրենակիցներին բռնակալ ուժերի դեմ մղված պայքարում:

Այդ նպատակով էլ դրողը վառ պատկերներով ու ցայտուն կերպարներով վերակենդանացրեց արևմտահայ ժողովրդի կյանքի այն փուլը, երբ, իր իսկ խոսքերով սասած՝ «... լռնադատիչ խավարը կճնշեր թրքահայ մտքին և գրականության վրա»¹⁵, Գույրի և անձի անապահովություն, աղքիկների առևանգում, լռնի հավատափոխություն, ավերածություն և կոտորած, — ահա այն իրականությունը, որի մեջ գտնվում էր արևմտահայ բնակչությունը և որը գեղարվեստորեն ներկայացրել է Զարգարյանը՝ նա ցույց է տվել, թե ինչպես «մորթելու և կողպատելու, պղծելու համար ոտքի ելած խուժանք» անարգել անցնում է հայոց բնակավայրերով և խաչանիշ դժբեկների, զանգակատների վրա պարգում «մուհամետին ու հավսր ուրվականը»¹⁶, որից ժողովում է արշավում Գրուդն անողորմարար մերկացնում է թուրք և բուրդ բեկերին ու աղաներին, որոնք ճնշում, կեղեքում, նվաստացնում ու սպանում էին հայերին, բանդում ու ավերում նրանց բնակավայրերը:

Ժողովրդի ողբերգական կյանքից առնված մի ցնցող պատկեր է «Մարն դամաուկը մոսցով» (1905) նորավեպը՝ Հեղինակը պատմում է, թե ինչպես ջարդի օրերին, երբ վայրագ թշնամին հրի ու սրի էր մատնում հայկական բնակավայրերը, իրկու եղբայրների կանայք իրենց կոնակին կապած երեխաներին՝ հնարավոր փախչում էին՝ նրանց «գամփոնների պես» հետապնդում էին ելուզակները, որոնք սարսափազդու զոռոցով և օդի մեջ կրակելով՝ վախ էին ներշնչում այդ անպաշտպան կանանց, ստիպելով անձնատուր լինել: Բայց նրանք շարունակում էին վազել շնչասպառ՝ իրենց պատիվը փրկելու համար: Մական զգալով մոտեցող վտանգը՝ նրանցից նազենին նախ իր երեխային է նետում գետը, ապա՝ անբրակնոց երեխային՝ առաջ բերելով վերջինիս մոր՝ Կյուլիսի «աղեխարշ վայնասունը»: Հեղինակը ճշմարտացիորեն բացահայտում է թշվառ մոր ծանր հոգևորիճակը, նրա «սուր ու սարսափազին աղաղակը», որ «արձագանքեց մահահոտ այդ միջավայրին»: Այնուհետև որդեկորույս մայրերը, այդ «հիմուրացած կիները», — ասում է Զարգարյանը, — գիշերային տենդահար վշուկներու պես փախչում էին, «փախցնելով իրենց հետ կյանքին վայրագ փրկությունը, կնոջական պատվին անհաս սրբությունը»:

Ինչպես այստեղ, այնտեղ էլ այլ դեպքերում Զարգարյանն ընտրում է այնպիսի սյուժեներ, որոնց զարգացումն ինքնին բացահայտում է տիրող իրականության հակամարդկային բնույթը, նրա ողջ դաժանությունը:

Այդ կարգի գործերից է նույն թվականին գրված «Մուն մրն ալ պակաս» պատմվածքը՝ հազեցած լարված գործողությամբ ու ողբերգական շնչով: Թուրքերն առևանգել են Մարիամի աղջկան՝ Սրմային: Խեղճ մայրը աշնան անձրևի տ օրերին, ոտարորիկ, «գլուխը ամբողջ ցեխով ծածկված», վեց-յոթ ժամ ճանապարհ է անցել, եկել քաղաք և ընկել առաջնորդարան՝ օգնություն խնդրելու: Բայց այստեղ նրան կարեկցող չկա, առաջնորդական տեղապահը անտարբեր լսելով իր դիմաց կանգնած դժբախտ Մարիամին, ինքն իրեն խորհում է. «Ի՛նչ է եղեր, աղքիկ մը տաճկեցի է, թող երթա տաճկնա, շուն մրն ալ պակաս... Կրտսեկան ժողովրդ, Աղզր գործ չունին, առավ-փախավներով պիտի գրադին»։ Եվ կոպտորեն վռնելով է տալիս Մարիամին, որն օրերով թափառում է փողոցներում: Մի օր էլ նրան հաջողվում է նորից ընկնել առաջ-

¹⁵ Կույն տեղում:

¹⁶ Ի. Զարգարյան. Ցայգալույս. Երևան, 1959, էջ 44:

նորդարան, այս անգամ վարդապետը ծաղրում է նրա մայրական զգացումները, վերավերում նրա արժանապատվությունը: Ի պատասխան վարդապետի հասցրած վիրավորանքի Մարիամն ըմբոստանում է և նրա երեսին ամբողջ ուժով պոռում. «Հայր սուրբ, աղջի՛կս կուզեմ, աղջի՛կս կուզեմ ազգեն, մենք մեր բերնեն կկտրենք ժամուն ու վանքին. առաջնորդարանին ու առաջնորդին կուտանք, որ անոնք ալ մեր նամուն ու մեր աղջիկներուն պատիվը պահեն...»:

Աղետյալ մոր ցասկոտ խոսքերից կատաղած վարդապետը հրամայում է դուրս շարտել նրան. «... շուտ սա լկտին առաջնորդարանեն դուրս վոռնտե», — ասում է նա ծառայողին:

Մի այլ իրողություն է ներկայացված «Զղջումը» (1906) նորավեպում, որը հեղինակի լավագույն գործերից է: Գոմիսեր Համտի էֆենդին «չարաշուք մղձավանջի» նման ծանրացել է հայ բնակչության կյանքի վրա: Օձի պես փաթաթվել է հայի ձակատագրին և «օղակի մեջ առած կտանջեր. կխեղդեր զայն»: Թալան, կողոպուտ, սպանություն, — ահա թե ի՛նչով է զբաղված այդ գազանը, որ մարմնավորում է թուրքական բռնապետության ողջ դաժանությունը: Այլևս անհնար է համբերել, հարկավոր է ոչնչացնել նրան: Եվ այդ գործը հանձնարարվում է «անպատիվ» զբաղմունքի տեր Աննային, որը և կազմակերպում է Համտիի սպանությունը և դրանով իսկ քավում իր մեղքը: Չնայած սպառնացող մահապատժին, նա իրեն պահում է կատարած գործի վեհությունը գիտակցող մարդու հպարտությամբ: Հարցաքննության ժամանակ գործադրած ծեծն ու խոշտանգումները չեն կարողանում ընկճել հայրենասեր այդ կնոջ կամքը: Իսկ դատարանում նա համարձակ պատասխաններ է տալիս առաջադրված հարցերին, առաջ բերելով դատասրահում խռնված բաղմունքյան հետաքրքրությունն ու զարմանքը: Նա չի տալիս ոչ մի նոր նյութ ու ոչ մի անուն և այնպես է խճճում սպանության հանգամանքները, որ ոչ ոք չի կարողանում գլուխ հանել:

Ի վերջո դատարանը Աննային դատապարտում է մահապատժի: Բայց դա ամենևին չի սարսափեցնում նրան, որովհետև զգում է իր արարքի արդարագիտությունը: Եվ ահա բանտախուց նետված Աննան խորհում է իր ձակառագրի մասին. հիշում է իր անցյալը, աղջկական «խենթ տարիները», «ամուսնության առաջին տարիներուն վարդե քաղցրությունը», հետո ամուսնու պանդխտելն ու անդարձ լինելը, իր «սայթաքումը, աշխարհի արհամարհանքը»:

Այս և նման հուշերով էր տարված Աննան, որի ակտիվ աջակցությամբ նրա իսկ տանը մի խումբ հայ երիտասարդների հաջողվում է սպանել Համտիին և նրա դիակը նետել «թաղեբեն դուրս աղտոտ ձորի մը մեջ»: Ու թեև արյան հետքերը ոստիկանությանը բերում են Աննայի տուն, ուր գտնում են նույնիսկ իրեղեն ապացույցներ (Գոմիսերի ֆեսը և մի փունջ մաղ). բայց և այնպես անվախ այդ կինը մնում է անդրդվելի՝ չընդունելով ոչ մի մեղադրանք և կրկնելով նույն անփոփոխ պատասխանը: Սա ցույց է տալիս հարկնոջ ազատասեր ոգին, պայքարի ելած ժողովրդի կամքը կատարելու վճռակալությունը: Նման համարձակ ու քաջ մարդիկ միայն կարող են ակտիվորեն մարտնչել ժողովրդի շահերի համար և հերոսաբար նահատակվել:

Այդ գաղափարն է արտահայտված նաև «Ցեղին զավակը» (1907) նորավեպում, որտեղ պատկերված է մեր ժողովրդի կյանքի մոռյալ դրվագներից մեկը: Չարսանճակ գավառում, ուր «տարին տասներկու ամիս սով է և մուտ մը հացը արյունի գին», իշխում է Ասլան բեկը: Վերջինս իր դաժանությամբ առանձնապես ծանր վիճակի է հասցրել հայ ազդարնակչությանը, որի շատ ներկայացուցիչներ թողնում են գավառը և գալիս քաղաք (Խարբերդ). «կոնակով քար ու աղյուս կրելու» և մի կտոր շոր հաց վաստակելու:

Այդպիսին է հենց Վարդանը, որը քաղաքում մինչև աշխատանք գտնելը ստիպված է դռնեդուռ ընկնել և մուրացկանությամբ զբաղվել: Զբոսայգիից տանջահար, քաղցից ոսկրացած և ցնցոտիների մեջ կծկված այս պանդուխտը քաղաքում դարձել էր զարմանքի, արգահատանքի ու ծաղրի առարկա:

Վրա է հասնում 1895 թ. կոտորածը, խուճապահար փոխշում են քաղաքացիները, ավելի սարսափով փախուստի են դիմում «հարուստները, բնակա-

տունները, աղաները», որոնք ապաստանում են լատինաց եկեղեցում և թուրքի աթոռներում: Կանանց ու երեխաներին առած,— ասում է հեղինակը,— հայ վերնախավերն իրենց հողին ու նամուսը սեփական ձեռքերով հանձնում են թըշնամու: «գութին, դանակին ու կամեցողությանը»: Դա, հիրավի, ամոթալի անձնատուություն էր, և սամուլության ոգով սնված քաղբենիների ստրկամտություն: Իրենց գոյությունը պահպանելու համար նրանք ուրանում են իրենց ազգությունն ու հավատը և աղոթում իսլամին:

Նրան հակառակ հասարակ մարդիկ, որոնց թվում չարսանձակցի Վարդանը, պատրաստ են մահ տեսնելու հանուն ազգային արժանապատվության: Բնորոշ է, որ երբ հրացանակիր շարդարարները մոտենում են մոխրատեղում գտնվող Վարդանին և հրամայում «սևլեվեթ» (աղոթք) անել, նա հավատարիմ մնալով իր հավատքին՝ վհահանաբար մերժում է կատարել թշնամու պահանջը և գերադասում մահը: Ինքուհեղ Մահմուդը հանուն հոր և որդվու: Հետևաբար, Վարդանն է, իսկապես, ցեղի պաշտպանը և նա է իր մեջ կրում ցեղի «գետնամած մեծությունը, վհահանձնությունը»:

Ձարդարյանը օտարության մեջ տառապող պանդուխտների, հասարակ մարդկանց մեջ է տեսնում ժողովրդական խառնվածքի բնորոշ գծերը: Ուստի զարմանալի չէ, որ նա տարբեր առիթներով անդրադարձել է հայրենի հողից պոկված, բայց և նրա կարոտով այրվող թափառական զավակների շարքաշ կյանքին ու ապրումներին:

Այդ անսակևաից հետաքրքրական է «Հայրենիքս կուզեմ ևս» (1907) գրվածքը, որը շնայած իր սեղմ ծավալին, ունի լայնակտավ երկի բովանդակություն: Հեղինակը վարակիչ շնչով վերարտադրել է Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերից Դանուբի սփերը հասած պանդուխտների թշվառ վիճակն ու հոգեկան տաղանայնությունը: Նրանց մշտական հավաքատեղին մի սրճարան է, որը մութ, խոնավ, «սփմր տեղ» է. պատերից կախված են հնամաշ ցնցոտիներ, գործավորի կեղտոտ լաթեր, մի տեղում՝ երկար նստարանի վրա ծաված սնկոդին, զանազան ամաններ և այլն: Բոլոր նշաններից երևում է, որ այդ սրճարանը երկնայան խոհանոց է, դիշերը՝ ննջարան: Այդտեղ են հավաքվում հայ պանդուխտները և աղտոտ սեղանների շուրջը նստած՝ սուրճ ևն խմում ու ծխում...: Ձարդարյանը շեշտում է այն հանդամանքը, որ նրանք չեն խոսում. ոչ մեկը չունի «ներքին գոհունակ տրամադրություն»: Թվում է, թե «պաղպատի ծանրություն» ունեն իրենց մեջքերի վրա, որը և ճնշում է նրանց ուտելը. ուստի և «կորաքամակ են ու գլխիկոր և տխուր, տխուր մահու շափ»:

Եվ դա հասկանալի է. տխուր են ու մտահոգ, որովհետև, ինչպես հեղինակն է ասում՝ «վաստակը չի բավեր, երկրի սլարտը չի հատնիր, դարիպությունը վերջ չունենար, որովհետև բրտինքը աժան է ու երկրին զուլումը շատ»: Չնայած դրան, սակայն, նրանք ներքուստ ամրապինդ են և ներշնչված հայրենիքի սիրով:

Այդպիսի հայրենասեր է իննսունամյա Նորսուն. սա թեև քսանհինգ տարուց ավելի է, որ դեգերում է օտար երկրի տակ, բայց շարունակ հիշում, մտաբերում է հայրենի գյուղը, հարազատներին ու մերձավորներին և կարոտից արտասվում: Նրա շուրթերից մշտապես հնչում է «Հայրենիքս կուզեմ ևս» խոսքը, որը ոչ այլ ինչ է, և թե ոչ հալածական ժողովրդի ազիզողում պաղատանք, նրա պանդուխտ զավակների հոգու կանչ. «Դանուբեն մինչև Նեզոս և Մարիցայեն մինչև Միսիսիսի,— գրել է Ձարդարյանը,— նույն տրամության

ստվերը, նույն կարոտի ոգը, իր հեռավորահաս, նույն հավիտենական ուխ-
աավորը՝ որ կբալե, կբալե ու տեղ չի հասներ»:

Այս տողերում ծրարված է բազմատանջ ճակատագիրը մի ողջ մոդուլի, որի դժբախտ զավակները օտար հորիզոններում կրկնում են նորսոյի խոսքը և ինչպես մեր «ցեղը անառավոտ գիշերվան մը խավարին տակ միշտ արթուն, կկանչե համեցող արշալույսը, կկանչե րարձրածայն ու կհուսա...»:

Այսպիսի լայատեսությունը է սվարտվում սույն գործը. որն այսօր էլ շատ կողմերով համահնչյուն է սփյուռքահայ աշխատավորների հայրենակարոտ ապրումներին: Ուր էլ գնան, որտեղ էլ քայլեն, նրանց հոգու մեջ շողարձակում է նույն խոսքը՝ «հայրենիքս կուգեմ ես»՝ թայց սա լոկ խոսք չէ. այլ սրտախորով մորմոք, հայրենակեզ ոգու բռնկում:

РУБЕН ЗАРДАРИАН И ЕГО НОВЕЛЛЫ

Г. А. САРКИСЯН

Р е з ю м е

Рубен Зардарян (1874—1915) является одним из выдающихся западно-армянских писателей-прозаиков. Он известен как талантливый новеллист, публицист, педагог и литературно-общественный деятель. В статье представлено сжатое описание жизни и деятельности Зардаряна, тематический и идейно-художественный анализ его новелл, подчеркивается отличная сила реалистического искусства писателя.